ԱՐԴ1/0001/01/16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 21-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հունվարի 20-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 69100115 (ԱՐԴ1/0001/01/16)

քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Սուսաննա Վարուժանի Պապոյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (ասյուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 38-35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 8-րդ կետերով:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Վ.Խալաթյան) 2016 թվականի հունվարի 20-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2016 թվականի հունվարի 29-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

1.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով Սուսաննա Վարուժանի Պապոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ կետերով և վերջինիս նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով:

1.2. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Սարգսյան) 2019 թվականի մարտի 4-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2019 թվականի մարտի 14-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

2.1. 2020 թվականի հունիսի 12-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Հովհաննիսյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի հուլիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

2.2. 2020 թվականի նոյեմբերի 24-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Վ.Ջիվանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի նոյեմբերի 26-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2.3. 2022 թվականի մարտի 21-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Ղուկասյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի ապրիլի 5-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործի քննությունը վերսկսելու և դատական քննության նշանակելու մասին:

2.4. 2023 թվականի փետրվարի 1-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Է.Մանասյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 3-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը վարույթ ընդունելու և գործի դատական քննությունը վերսկսելու մասին:

3. 2025 թվականի ապրիլի 9-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Բաբախանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի ապրիլի 10-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի օգոստոսի 12-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Տ.Ոսկանյան) 2025 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի օգոստոսի 28-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Սույն վարույթի նյութերի՝ մասնավորապես, մեղադրական եզրակացության համաձայն՝ 2014 թվականի նոյեմբեր ամսին Սուսաննա Պապոյանը հանդիպել է բարեկամ՝ Երևան քաղաքի բնակիչ, Արմեն Պապոյանին, ում հետ շփման ընթացքում պատմել է նաև իր և **********-ի միջև առկա քաղաքացիաիրավական վեճերի մասին, իսկ արդեն 2014 թվականի դեկտեմբեր ամսին, երբ Երևան քաղաքում հերթական անգամ հանդիպել է Արմեն Պապոյանին և վերջինիս ընկեր Ավետիս Խաչատրյանին, նրանց առաջարկով միասին գնացել են Արմավիրի մարզի Փարաքար գյուղում գտնվող «*****» ռեստորանային համալիր, որտեղ Սուսաննա Պապոյանը շահադիտական դրդումներով պատվիրել է կազմակերպել ****** և ***** *********-ների սպանությունները՝ վերջիններիս նկատմամբ ունեցած և քաղաքացիաիրավական վեճերի արդյունքում ծագած գույքային պարտավորվածությունները չկատարելու ու այդ կերպ նյութական ծախսերից ազատվելու համար: Մտադրությունն իրականացնելու նպատակով Արմեն Պապոյանին և Ավետիս Խաչատրյանին առաջարկել է գտնել սպանություններն անմիջական կատարող անձի և պատրաստակամություն հայտնել հանցանքն իրականացնելու դիմաց վճարել 10.000 ԱՄՆ դոլար, ապա կատարել է նախապատրաստական գործողություններ և 2015 թվականի հունվար ամսին Արմեն Պապոյանի և Ավետիս Խաչատրյանի հետ մեկնել է ****** քաղաք, որտեղ վերջիններիս մատնացույց է արել ****** և ******* ********-ների բնակության վայրերը, որից հետո Արմեն Պապոյանի հետ քննարկել է սպանությունների կատարման հնարավոր եղանակները, այդ թվում առաջարկելով խեղդամահ անել

********** և ******** ********-ներին իրենց բնակարաններում՝ ստեղծելով գույքի հափշտակության տպավորություն՝ իր կողմից հանցագործությունների կատարման կազմակերպման այլուրեքությունն ապահովելու համար:

Սուսաննա Պապոյանի կազմակերպած հանցագործությունն ավարտին չի հասցվել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Արմեն Պապոյանը և Ավետիս Խաչատրյանը որոշել են նախապատրաստվող հանցագործության մասին հայտնել իրավապահ մարմիններին և 2015 թվականի հունվարի 22-ին Արմեն Պապոյանը ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությունում հաղորդում է տվել նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ[1]:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ըստ մեղադրական եզրակացության մեղադրյալ Սուսաննա Պապոյանին առաջադրված մեղադրանքում նկարագրված են հետևյալ ենթադրյալ արարքները ըստ ժամանակագրական հաջորդականության.*

*- 2014 թվականի դեկտեմբեր ամսին ********** մարզի ********** գյուղում գտնվող «*******» ռեստորանային համալիրում Սուսաննա Պապոյանը շահադիտական դրդումներով պատվիրել է կազմակերպել ******** և ******* **********-ների սպանությունները:*

*- ապա կատարել է նախապատրաստական գործողություններ և 2015 թվականի հունվար ամսին Արմեն Պապոյանի և Ավետիս Խաչատրյանի հետ մեկնել է Վանաձոր քաղաք, որտեղ վերջիններիս մատնացույց արել ***** և ****** ******-ների բնակության վայրերը, որից հետո Արմեն Պապոյանի հետ քննարկել է սպանությունների կատարման հնարավոր եղանակները:*

- 2015 թվականի հունվարի 22-ին Արմեն Պապոյանը Երևան քաղաքում՝ ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությունում հաղորդում է տվել նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ:

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 357-368:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ մեղադրյալ Սուսաննա Պապոյանին վերագրվող ենթադրյալ հանցանքը ավարտվել է Երևան քաղաքում, երբ Արմեն Պապոյանը ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությունում հաղորդում է տվել նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ:

*Դատարանը, սույն քրեական գործի ընդդատության հարցի քննարկման շրջանակներում, հարկ է համարում մեջբերել նաև սույն քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2018 թվականի օգոստոսի 8-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, համաձայն որի «(...) վերաքննիչ դատարանի համար նույնպես հստակ չէ, թե ի վերջո որն է Սուսաննա Պապոյանին առաջադրված մեղադրանքը, ըստ դրա էլ՝ առաջին ատյանի որ դատարանին է ընդդատյա քրեական գործը, քանի որ համաձայն նրան առաջադրված մեղադրանքների՝ Սուսաննա Պապոյանը ոչ միայն Արմեն Պապոյանին ու Ավետիս Խաչատրյանին դրդել է կազմակերպել ****** և ***** **********-ների սպանությունը, այլև կատարել է սպանության նախապատրաստությանն ուղղված գործողություններ, սակայն իր հանցավոր մտադրությունը չի կարողացել ավարտին հասցնել իր կամքից անկախ հանգամանքով, քանի որ Արմեն Պապոյանն ու Ավետիս Խաչատրյանը կամովին հրաժարվել են հանցագործության կատարումից և 2015 թ-ի հունվարի 22-ին Արմեն Պապոյանը նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն, ինչից հետևում է, որ եթե սպանության դրդչությունը կատարվել է Արմավիրի մարզում, ապա դրան ուղղված նախապատրաստական գործողություններն ավարտվել են Երևան քաղաքում (...)»:*

Դատարանը հարկ է համարում նշել, որ եթե նույնիսկ մեկնաբանվի, որ մեղադրյալ Սուսաննա Պապոյանին առաջադրված մեղադրանքից չի երևում վերջինիս մեղսագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա Դատարանը գտնում է, որ նույնիսկ նման մեկնաբանության դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, սույն քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, քանի որ մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ

քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչությունում և մեղադրական եզրակացությունը կազմվել է Երևան քաղաքում:

Դատարանը հարկ է համարում նշել նաև, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2025 թվականի մարտի 31-ի թիվ ԱՎԴ4/0051/01/21 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգի առերևույթ առկայության մասին, սույն դեպքում կիրառելի չեն, քանի որ Դատարանը սույն քրեական գործն ըստ ընդդատության չի փոխանցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հայեցողական լիազորությունից օգտվելով:

Միաժամանակ Դատարանի կողմից սույն քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելը պայմանավորված է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 8-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմամբ սահմանված Առաջին ատյանի դատարանում նոր քննության ծավալով:

Նման պայմաններում, Դատարանը գտնում է, որ թիվ ԱԴ1/0001/01/16 քրեական գործն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական տվյալներից ուղղակիորեն բխում է, որ 2014 թվականի դեկտեմբեր ամսին, Սուսաննա Պապոյանը փորձել է Արմեն Պապոյանի և Ավետիս Խաչատրյանի մոտ առաջացնել հանցանքի կատարման դիտավորություն, այն է ********** մարզի ******* գյուղում գտնվող «******» ռեստորանային համալիրում նրանց առաջարկել է կազմակերպել ******** և ****** *********-ների սպանությունները, այնուհետև 2015 թվականի հունվար ամսվա սկզբին, Արմեն Պապոյանի և Ավետիս Խաչատրյանի հետ մեկնել է ****** քաղաք, որտեղ վերջիններիս մատնացույց է արել ******* և ******* **********-ների բնակության վայրը: Այսինքն՝ առաջադրված մեղադրանքի սահմաններից բխում է, որ սույն*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 14, թերթեր 71-76:

պարագայում գործ ունենք հանցագործության նախապատրաստությանն ուղղված արարքների հետ, ըստ որի՝ Սուսաննա Պապոյանը իր դիրքավորության մեջ ընդգրկված հանցանքի նախապատրաստմանն ուղղված առաջին գործողությունը կատարել է Արմավիրի մարզում, իսկ վերջինը՝ Վանաձոր քաղաքում: Միաժամանակ, այդ գործողություններից հետո՝ 2015 թվականի հունվարի 22-ին Արմեն Պապոյանը ՀՀ Ոստիկանության ՔՀԳ վարչությունում հաղորդում է տվել նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ:

Վերոգրյալի արդյունքում, հարկ է արձանագրել, որ Սուսաննա Պապոյանը, Արմեն Պապոյանը և Ավետիս Խաչատրյանը չեն գործել համատեղ, և հանցանքը ավարտին չի հասել Սուսաննա Պապոյանի կամքից անկախ հանգամանքներով, ուստի Սուսաննա Պապոյանի կողմից նախապատրաստվող հանցագործության ավարտին չհասնելու պահը թեպետ կապված է Արմեն Պապոյանի կողմից ՀՀ Ոստիկանության ՔՀԳ վարչությունում հանցագործության մասին հաղորդում տալու հետ, սակայն դա չի նշանակում, որ Սուսաննա Պապոյանի կողմից նախապատրաստվող ենթադրյալ հանցանքի կատարման ուղղված արարքների վերջին վայրը հանդիսանում է Երևան քաղաքը:

Դատարանը, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքի 35-րդ, 37-րդ և 39-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումների և սույն որոշմամբ տեղ գտած վերլուծության հաշվառմամբ, գտնում է, որ Սուսաննա Պապոյանի կողմից նախապատրաստվող ենթադրյալ հանցանքի կատարմանն ուղղված արարքների վերջին վայրը չի հանդիսանում Երևան քաղաքը:

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ է արձանագրել, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմամբ անդրադարձել է Վերաքննիչ քրեական դատարանի ընդդատության կանոնների վերաբերյալ արտահայտած դիրքորոշմանը (…)

Վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում, հարկ է փաստել, որ վերաքննության կարգով բողոքարկված ակտի անվերապահորեն բեկանման հիմք է հանդիսանում, ի թիվս այլնի ընդդատության կանոնների խախտմամբ կայացված դատական ակտը: Ընդ որում՝ վերոնշյալ հիմքի առկայության դեպքում վերադաս դատարանը վարույթը փոխանցում է

համապատասխան դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (թեև մեջբերվեց գործող քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածները, սակայն ընդդատության կանոնների խախտումը բողոքարկված ակտի անվերապահ բեկանման հիմք էր նաև 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով):

Սույն գործի փաստական տվյալների համաձայն՝

- 2017 թվականի սեպտեմբերի 07-ին՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ1/0001/01/16 դատավճռով՝ ամբաստանյալ Սուսաննա Վարուժանի Պապոյանը մեղավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման մեջ և այդ հոդվածի սանկցիայով դատապարտվել է ազատազրկման 10 (տաս) տարի ժամկետով,

- 2018 թվականի օգոստոսի 08-ին՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի թիվ ԱՐԴ1/0001/01/16 որոշմամբ՝ պաշտպան Հ.Անանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 07-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Սուսաննա Վարուժանի Պապոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ ու 8-րդ կետերով բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Ամբաստանյալ Սուսաննա Պապոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնվել է անփոփոխ: Ամբաստանյալ Սուսաննա Պապոյանին կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանվելով 2 (երկու) միլիոն ՀՀ դրամը:

Այլ կերպ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ ԱՐԴ1/0001/01/16 դատավճիռը բեկանելիս, ընդդատության վերաբերյալ սույն որոշմամբ արձանագրված դիրքորոշումը հայտնելիս, ի վերջո չի գտել, որ այն ընդդատյա չէ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի օգոստոսի 08-ի որոշմամբ

սահմանվել է նոր քննության ծավալը, այն է՝ «Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանը պետք է քննության առարկա դարձնի գործի նախորդ քննության ընթացքում անտեսված և սույն որոշման մեջ նշված հանգամանքները, այդ թվում նաև պաշտպան Հ.Անանյանի կողմից վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները՝ կապված ապացույցների անթույլատրելիության, ամբաստանյալ Ս.Պապոյանի կողմից հանցանքի կատարումից կամովին հրաժարվելու և մյուս այն բոլոր հարցերի շուրջ, որոնք պաշտպանության կողմը առաջ է քաշել նաև Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատաքննության ընթացքում, սակայն դատարանի կողմից դրանք որևէ վերլուծության ու գնահատման չեն արժանացել», և բեկանելով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ ԱՐԴ1/0001/01/16 դատավճիռը փոխանցել է նույն դատարան՝ նոր քննության:

Այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ընդդատության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը կապված է եղել Ս.Պապոյանին առաջադրված մեղադրանքի ծավալի փոփոխություններով, հակառակ պարագայում, ընդդատության կանոնների խախտման հանգամանքի հաստատման դեպքում, Դատարանի գնահատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանելով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ ԱՐԴ1/0001/01/16 դատավճիռը՝ որպես համապատասխան դատարան՝ չէր ուղարկի Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ նոր քննության:

Հաջորդիվ, անդրադառնալով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմամբ արձանագրված գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգի առերևույթ առկայության մասին արված հետևություններին, առ այն, որ սույն դեպքում դրանք կիրառելի չեն, քանի որ քրեական գործն ըստ ընդդատության չի փոխանցում ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հայեցողական լիազորությունից օգտվելով, Դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2025 թվականի հուլիսի 21-ի «Վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին» թիվ ԵԴ/0587/01/20 որոշմամբ արձանագրված դիրքորոշումների լույսի ներքո հարկ է փաստել, որ դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգի առկայության հարցը չի վերաբերում բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հայեցողական լիազորություններն իրականացնելով՝ նկատի ունենալով, որ վերոգրյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումը վերաբերելի է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորումների համատեքստում քննության ենթակա հարցին:

Բացի այդ, Դատարանը վարույթն ըստ ընդդատության փոխանցելու Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի օգոստոսի 12-ի որոշման շրջանակներում հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

(…)

Սույն գործի փաստական տվյալների համաձայն՝ թիվ 69100115 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Սուսաննա Վարուժանի Պապոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 8-րդ կետերով, 2016 թվականի հունվարի 08-ի գրությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալ իրավակարգավորման և մատնանշված փաստական տվյալի համատեքստում, հարկ է արձանագրել, որ հաստատված մեղադրական եզրակացությունը դատարան է ուղարկվել 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդդատության կանոնների պահպանմամբ, ուստի անհրաժեշտ է բարձրացնել նաև հետևյալ հարցը.

Արդյո՞ք իրավաչափ է նախկին քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ընդդատության կանոնների պահպանմամբ Արմավիրի մարզի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված, նույն Դատարանի կողմից գրեթե 10 տարի քննվող (թվով 7 դատավորի նախագահությամբ) գործը՝ ուղարկել տարածքային ընդդատության կանոններով՝ գործող քրեադատավարական օրենսդրությանը հղում տալով, թե ոչ: Ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Է.Մանասյանը սույն քրեական գործով 2023 թվականին փետրվարի 03-ին կայացրել է «Քրեական գործը վարույթ ընդունելու և գործի դատական քննությունը վերսկսելու մասին» որոշում: Այլ կերպ՝ 2022 թվականի հուլիսի 01-ից ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում դատավոր Է.Մանասյանը գործի քննությունը իրականացրել է 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, իսկ նույն դատարանի դատավոր Ա.Բաբախանյանը գործող քրեական դատավարության օրենսգրքով:

Եվ վերջապես, Դատարանի գնահատմամբ ցրամաբանական հարցադրում է առաջանում նաև հետևյալ հանգամանքների վերաբերյալ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածով սահմանված են նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերի շրջանակը և հարցերի քննարկման վերաբերյալ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է քննարկման ենթակա հարցերի հաջորդականությունը, որպիսի հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, նաև, որ նշված հարցերի քննարկման հաջորդականությունից շեղում թույլատրվում է բացառապես մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի քննարկումը, որը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է քննարկվել առաջնահերթության կարգով:

Սույն դեպքում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածով թվարկված հարցերը, այդ թվում նաև ընդդատության և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հարցը, միայն այլ վերաբերելի հարցերի քննարկման շրջանակում է սույն քրեական գործը ըստ ընդդատության փոխանցել:

Ամբողջ վերոշարադրյալի արդյունքում, Դատարանը գտնում է, որ թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական գործը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]:*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 3-20:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր*

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճռով Սուսաննա Պապոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 8-րդ կետերով:

15.1. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության, արձանագրելով, որ վերաքննիչ դատարանի համար հստակ չէ, թե ի վերջո առաջին ատյանի որ դատարանին է ընդդատյա քրեական գործը:

16. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին, փաստելով, որ մեղադրյալ Ս.Պապոյանին վերագրվող ենթադրյալ հանցանքն ավարտվել է Երևան քաղաքում, երբ Արմեն Պապոյանը հաղորդում է տվել նախապատրաստվող հանցագործության վերաբերյալ:

16.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ եթե նույնիսկ մեկնաբանվի, որ մեղադրյալ Ս.Պապոյանին առաջադրված մեղադրանքից չի երևում վերջինիս մեղսագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա նման մեկնաբանության դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, սույն քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քրեական դատարանին, քանի որ մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչությունում և մեղադրական եզրակացությունը կազմվել է Երևան քաղաքում:

Միաժամանակ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստել է, որ սույն քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելը պայմանավորված է նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 8-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմամբ սահմանված Առաջին ատյանի դատարանում նոր քննության ծավալով[7]:

17. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ թեև Ս.Պապոյանի կողմից նախապատրաստվող հանցագործության ավարտին չհասնելու պահը կապված է Ա.Պապոյանի կողմից հանցագործության մասին հաղորդում տալու հետ, միաժամանակ գտել է, որ Ս.Պապոյանի կողմից նախապատրաստվող ենթադրյալ հանցանքի կատարմանն ուղղված վերջին արարքների վայրը չի հանդիսանում Երևան քաղաքը:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ընդդատության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը կապված է եղել Ս.Պապոյանին առաջադրված մեղադրանքի ծավալի փոփոխություններով, հակառակ պարագայում, ընդդատության կանոնների խախտման հանգամանքի հաստատման դեպքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, բեկանելով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի դատավճիռը, քրեական գործը չէր ուղարկի Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

17.1. Միաժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածով թվարկված հարցերը, այդ թվում նաև ընդդատության և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու

[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հարցը, միայն այլ վերաբերելի հարցերի քննարկման շրջանակում է սույն քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[8]:

18. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ համաձայն սույն վարույթի նյութերի՝ Սուսաննա Պապոյանի կողմից ենթադրյալ հանցանքի կատարմանն ուղղված նախապատրաստական գործողություններն ավարտվել են Ա.Պապոյանի և Ա.Խաչատրյանի հետ Վանաձոր քաղաք մեկնելով, վերջիններիս ******* և ****** **********-ների բնակության վայրերը մատնացույց անելով և ենթադրյալ սպանությունների կատարման հնարավոր եղանակներն Ա.Պապոյանի հետ քննարկելով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով Ս.Պապոյանին վերագրված ենթադրյալ հանցանքը կատարվել (ավարտվել) է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

19. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ սույն որոշման 17.1.-րդ կետում նշված փաստարկը տվյալ վարույթի ընդդատության հարցի լուծման տեսանկյունից որոշիչ չէ:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

21. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ1/0001/01/16 վարույթն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Սուսաննա Վարուժանի Պապոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 8-րդ կետերով թիվ ԱՐԴ1/0001/01/16 քրեական վարույթն ընդդատյա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ